# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Գլոբալ Սպորտ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/60 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 2 | Զուգափայտ - 3500 մմ երկարությամբ, հենարանի նյութը-պինդ սոճի, թխկի կամ պինդ կեչի, զուգափայտերի հորիզոնական ձողերը պատրաստված են ամուր փայտյա տեսակներից՝ գործարանային արտադրության, փայտը պետք է լինի ամբողջական, հարթ, ողորկ և առանց խութերի (փայտյա փշերի) միջուկը՝ բարձր պողպատե միջուկով, որոնք հոդավոր միացությամբ ամրացված պետք է լինեն մետաղյա հենոցին կպցրած չորս ուղղաձիգ կանգնակների մեջ պտտվող դարձյակներին: Չպետք է լինի կոպիտ մակերեսներ, որոնք կարող են վնաս պատճառել օգտագործողին: Սուր ծայրերով կամ դուրս ցցված տարրեր չպետք է լինեն: Եռակցումները պետք է լինեն հարթ: Սարքավորման ցանկացած մասի անկյունները և ծայրերը, որոնք հասանելի են օգտագործողների համար, պետք է ունենան կլորացում ոչ ավելի, քան (3,00 ± 0,01) մմ շառավղով: Եթե կան պտուտակավոր միացումներ, ապա պտուտակավոր միացումների ծայրերը չպետք է դուրս ցցված լինեն ավելի քան 8 մմ. սարքավորման մակերեսից: Դուրս ցցված ծայրերը պետք է պաշտպանված լինի: Ձողերը չպետք է պտտվեն իրենց առանցքի շուրջ որևէ ուղղությամբ: Ձողանները դրվում են հատակից 1600-1700մմ բարձրության վրա՝ 420-620 մմ միջանցքով, արագ և դյուրին բարձրության և լայնության կարգավորմամբ: Նմուշը /նկար 2/ կցվում է: Պայմանագրի կատարման փուլում պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Նմուշ նկարը տրվում է զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չի կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Չափաբաժինների համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից |

| | |
|---|---|
| | ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը` ըստ բաշխման ցանկի իրականացվում է Մատակարարի կողմից: Եթե մատակարարումը իրականացվում է պահեստավորման վայր, ապա Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց, իսկ Վաճառողը պարտավորվում է տեղադրման ենթակա ապրանքների տեղադրումը վերջնական վայրում իրականացնել, երբ համապատասխան ապրանքները կտեղափոխվեն վերջնական վայր` Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում: Մինչև մատակարարումը չափաբաժնում ներկայացված ապրանքների նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Գլոբալ Սպորտ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/60 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 2 | |